



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Մ. Տ. Բաղդասարյանի Գրքատան


Թիի 45

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՄԵՆԱԿԱՆ ԲՈՒՆԻՔԱՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ



ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ՔՅՈՍՄՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

49 ՄԱՅԻՍ 1872



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԽՉԱՍԱՐԵԱՆ
= 1872 =

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԽԳ.

19 ՄԱՅԻՍ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ԱՂԱՐԷԿԵԱՆ Ս. ԷՖ. (Բ. Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Նորոգ ընտրութիւն Աղդ. վարչութեան Քաղ. Ժողովոյ :
2. Ընտրութիւն նորոգ դիւանի Ընդհ. Ժողովոյ :
3. Ատենական կանոնադրութիւն :
4. Կաթուղիկոսական և Պատրիարքական յարաբերութիւնք :

Ատենապետ էֆ. — Ատենադպիր Մերեւիմ-
 Գուլի էֆ. անձնական կարևորագոյն խնդրոյ
 մը համար բացակայ կը գտնուի, ուստի առ-
 եանը չբացուած Ատենադպիր մը պէտք է ու-
 ղենաւք :

Սոյն միջոցին՝ Ս. Պատրիարք հայրն, Ատե-
 նադպրութեան սրտոն վարելու կը հրաւիրէ
 Յովհաննէս էֆ. Կրճիկեան :

Ատենը բացուեցաւ ժամը 6 1/2 ին ՚ի ներ-
 կայութեան 42 Երեսօրիսանաց, որոց թիւն ՚ի
 վերջէ 81 ի հասաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ էՖ. — Թէև տակաւին մեծագոյն
 մաս չունիմք, բայց ըստ որում նախորդ նիս-
 տին շարունակութիւնը պիտի ըլլայ այսօր,
 վիճարանութեան համար առեանը բացուած
 է : Նախորդ նիստերու Ատենադրութիւննե-

րէն 1. Թ. Խ. և ԽԱ. նիստերունը դեռ տպա-
 րանէն չեն ելած, և վերջին ԽԳ. նիստի ա-
 տենադրութիւնն ալ Ատենադպիր էֆ. ին հի-
 ւանդութեան պատճառաւ տակաւին պատ-
 րաստուած չըլլալուն, յաջորդ նիստերուն կը
 մնայ սոյն ատենադրութեանց վաւերացումը :
 Բայց սոյն օրուան նիստի որոշման ենթարկե-
 վիք քանի մի խնդիրներ կան : Աղդ. Երեսօր-
 խաններէն Տ. Սրբիստակէս Արքազանի և Տատ-
 եան Առաքել Արսակ պէյի հրամարագիրերը
 թէև նախորդ նիստին մէջ կարդացուեր են,
 բայց որոշում չէ եղեր : Նոյնպէս Երեսօրիսան
 Մ. Մանուկեան էֆէնտիի կողմէն հրամարու-
 դիր մը եկած է, որ ահաւասիկ :

Ամենապատիւ Արքազան Հայր,
 Աղդսոյն Ընդհանուր Ժողովոյդ հաստա-

տուժեամբը կհասարից վիճակէն Երեսօրհանս ընտրուած օրէս 'ի վեր խիստ կը զօրացէր որ Հայրենակցացոյ կողմէն ինձ յանձնուած սոյն մտախիւսի և միանգամայն ծանր պաշտօնը ան- թերի վարեմ, բայց անձնական տկարութեանս պատճառաւ չկրնարով Բնդհանուր Ժողովոյ նիս- տերուն անընդհատ ներկայ ըլլալ, ախաւոյ պարտադանցութեան մէջ դանձուած եմ:

Ուստի Սրբազան Հայր, անձնական ար- կարութիւնս, և առողջութիւնս կազդուրելու համար այս օրերս Երոսդա ընելիք ճամբոր- դութիւնս կ'ստիպեն զիս հրաժարականս մա- տուցանել Ձեր Սրբազնութեան ու Ազգիս այս մասին ծառայութիւն մը ընելու անկարող ըլ- լալուս վրայ զգացած խորին ցաւս հաղորդե- լով Ձեր Սրբազնութեան խնդրել որ բարե- հաճիք հրաժարականս ընդունիլ և պէտք ե- գածը տնօրինել:

6 Մայիս 1872 Երևան
 Կ. Պոլիս Ձեր Սրբազնութեան
Խոնարհ Շառայ
 Մ. Մանուկ Մանուկեան

Այս երեք հրաժարականներն ալ կը մնան առայժմ, մինչև որ մեծազոյն մաս գոյանայ և այնուհետև Ժողովոյ որոշման պիտի են- թարկեմ: Իսկ օրուան կարգը Քաղ. Ժողովոյ ընտրութեան խնդրոյն է, և նախորդ նիս- տէն խօսից կարգն որու որ մնաց, խօսքը ա- նորն է:

ՆՈՐՈԳ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԴ. Վ.Ա.ՐԶՈՒԹԵԱՆ ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ

ՂԵՒՈՆԴ Վ.Ա.ՐԴ. ՓԻՐՂԱՆԻՄԵԱՆ. — Նա- խորդ նիստը դոյուելէն առաջ Ս. Նախագահ խօսք առած էր, բայց ընդմիջեցաւ: Ուստի խօսից կարգը Ս. Նախագահին է:

Ս. ՆԱՍԱԳԱՀ. — Ես խօսք չունիմ առ այժմ. իմ խօսից կարգը կը թողում ուրիշին:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Նախորդ նիս- տին խօսք ուզած էի Աշարէիեան Մարիս է- ֆէնտիի այն առարկութեան դէմ պատասխա- նելու համար, որով կը յայտնէր թէ մեր Սահ- մանադրութիւնն անորոճադրելի է և հակադ- զային, մինչդեռ ինք այդ օրինաց ուժով հոս կուզայ կը բազմի և զայն կանգոսնէ: Կը դար- մանամ որ իմ արդոյ պաշտօնակից երեսօրհանն էֆէնտիներն անոր այս խօսքին դէմ չ'ըողո-

քեցին. ուստի թէ որ հակադդային է պէտք է որոշել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այսօր ստեան բացի՞ր՝ չէ թէ նախընթաց նիստին խնդրէն դուրս ե- դած խել մը անողուտ խօսքերու պակասները շտկելու, այլ Քաղ. Ժողովոյ ընտրութեան խնդրոյն վրայ խօսելու համար: Ուստի ստե- նարան էֆէնտիներէն կը խնդրուի որ օրուան խնդիրը վիճարանին, ոչ թէ մէկը ծուռ նայե- ցաւ միւսը շիտակ ըսելով ժամովածաւ լինիք: Կ'աղաչեմ 'ի սէր Ազգին, ասանկ մասնաւոր խնդիրներու մէջ չ'մտնեմք:

ՂԵՒՈՆԴ Վ.Ա.ՐԴ. ՓԻՐՂԱՆԻՄԵԱՆ. — Եր- կու նիստէ 'ի վեր Ժողովս կ'ըրաչի Քաղ. Ժո- ղովոյ ընտրութեան խնդրով, որուն վրայ բա- ւական վիճարանութիւն եղաւ և խնդիրը բա- ւական լուսարանուեցաւ. երկու կարծիք երե- ւան ելած է. մին փորձագութեան վրայ յեն- լով Քաղ. Ժողովոյ համար Յ հոգի պէտք է կ'ըսէ, միւսն կը պնդէ որ ըստ Սահմանադ- րութեան 20 անձերէ բաղկանայ Քաղ. Ժողո- վը: Նախորդ նիստին Պէիեան էֆ. լաւ առա- ջարկութիւն մը ըրած էր, որով այս անհամա- ձայնութիւնը կրնայ վերջ դնուի. կ'առաջար- կեմ որ նոյ՛ք քուէի դրուի:

ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍ — Նախորդ նիստին՝ Ատե- նապետ էֆէնտիի կողմէն առաջարկութիւն մը ներկայացաւ Ժողովոյն, որուն ես ալ ձայ- նակցեցայ. այն է որ Բնդհ. Ժողովն ընտրէ իր գտահուութեան արժանի անձերէն մէկ Ա- տենապետ մը Քաղ. Ժողովոյ համար, և նա Ս. Նախագահին հետ համաձայնութեամբ իւր ըն- կերակցաց ցանկը շինելով Բնդհ. Ժողովոյ վա- ւերացման ներկայացնէ: Կարծեմ այս կէտը վերաքննութեան ծրագրին մէջ ալ կայ և լիո- վին զայն կը շօշափէ: Երբ Բնդհ. Ժողովէն ընտրեալ Ատենապետն Ազգային և քաղաքա- կան գործոց կատարելագոյնս հմուտ անձանց ցանկ մը կը ներկայացնէ, Բնդհ. Ժողովս ալ հասուն դատողութեամբ զայն քուէարկելով, դարձեալ Սահմանադրութենէ շեղած չըլլար, այլ Սահմանադրութեան խիստական նշանակու- թեան համեմատ Քաղ. Ժողով մը ընտրած կըլ- լայ, և վէճը բոլորովին կը լուծուի:

Ասկէ զատ կարևոր կէտ մ'ալ կայ, զոր հարկ կը համարիմ Ժողովոյ ուշադրութեան ներկայացնել: Նախորդ դաւառական յանձնա- խումբն արդէն այս կէտը նկատողութեան ա- ռած և գործադրութիւնը հարկաւոր դատած

էր: Մէք պէտք է որ վարչութեան Գործա- դիր Ժողովն զատ խորհող ժողով մ'ալ ունե- նամք Ազգին երևելի և աներևոյթ պիտուքներն խորհրդածութեան առնելու և պարտ ու պատ- շած տնօրէնութիւններն 'ի գործ դնելու հա- մար: Ուստի կ'առաջարկեմ նաև որ Քաղ. Ժո- ղովը 20 անդամներէ բաղկանայ, և երկու մա- սի բաժնուի. 10 անդամը խորհող ժողով և 10 անդամը գործադիր ժողով ըլլան: Ասի իմ անձնական կարծիքս չէ միայն, ոչ ալ կրբի ար- դիւնք է որ կը յայտնեմ, այլ փորձառութեա- նրս արդիւնքը. դաւառներուն մէջ Առաջնոր- դական պաշտօն և այցելութիւններ ունեցեր եմ և փորձով համոզուել եմ այս ըսածիս: Ե- թէ այսօր չ'համաձայնիք ինձ, օր մը պիտի գոյ որ ասոր պէտքը պիտի դադարէ: Յայտնի բան է որ Քաղ. Ժողովն երբ շարաթն օր մը կամ երկու օր կը դուստրի, խուռն բազմու- թիւն մը կուզայ կը չըջապատէ, և ժամանակ չ'թողուր լուրջ և հանդարտ մտածութեամբ որոշումներ ընելու. ասոր համար շատ անգամ կը քննադատեմք զինքը օրագիրներու մէջ: Ահա այս անտեղութիւնները հասկցնելով՝ իմ առա- ջարկութիւնս կը կրկնեմ և կը վերջացնեմ խօս- քըս:

ՕՍԿԱՆԵԱՆ Խ. ԷՖ. — Երեմիա Արքայան առաջարկութիւն մը կընէ, որն որ քուէի պի- տի դրուի թէ ոչ՝ կուզեմ նախապէս հասկը- նալ, որպէս զի ես ալ իմ առաջարկութիւնս ընեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը պարտք կը համարի յիշեցնել թէ տակաւին մեծազոյն մաս գոյացած չ'ըլլարով, չկրնար որ և է առաջար- կութիւն քուէի դնել: Ուստի դիւանին կողմէն ուրիշ առաջարկութիւն մը պիտի ընեմ ձեզ, առաջարկութիւն մը՝ որ վիճարանութեան կեր- պարանքին կը վերաբերի: Քաղ. Ժողովոյ չը- դոյութեան ո՛րքան զգալի ըլլալն ամենուն յայտնի է, և մանաւանդ այն ազգայնոց, ո- րոնք Պատարխարքարանի հետ գործ ունին, և վարչութիւն չ'ըլլալուն՝ գործերին չ'տես- նուիր: Հիմայ Ժողովոյն վիճարանութեան են- թակայ եղող խնդիրը սա՛ է թէ Քաղ. Ժողովը բաղմամբ ալ պէտք է ըլլայ թէ սակաւամբ: Մինչև հիմա եղած փորձերը ցուցած են մեզ՝ թէ Քաղ. Ժողովոյ բաղմամբ ըլլալը դժուա- րութիւն և անտեղութիւն ունեցած է. ես ալ անդամ գտնուած եմ Քաղ. Ժողովոյ. երբ 20 հոգիէ կը բաղկանար Ժողովը՝ գիտեմ որ շա-

տերը իրարու ետեւէ հրաժարեցան, մինչև որ Ատենապետիս պարտաւորեցաւ Բնդհ. Ժողո- վոյ դիմել և ըսել որ համամիտ անձանց ցու- ցակ մը շինուի և անոր վրայ ընտրութիւն ըլ- լայ: վերջապէս այս ալ չ'բարեց: Ուստի այ- սօր մեծազոյն մաս գոյանալէ ետև նախապէս որոշելի կէտը սա՛ է թէ Քաղ. Ժողովը քանի անդամէ պիտի բաղկանայ, և յետոյ կարգը պիտի գոյ ընտրութեան կերպին կամ թէ խոր- հող ու գործող մասերու բաժանման վրայ ե- դած առաջարկութիւնները քուէի դնել:

Հետևապէս այն երեսօրհաններն որ Քաղ. Ժողովոյ բաղմամբ կամ սակաւամբ ըլլալու կարևորութեան վրայ կուզեն խօսիլ, պէտք է որ խօսք առնուն և վիճարանութիւնը կար- դաւ շարունակեն այս կէտին վրայ, և եթէ այս մասին վիճարանութիւնը բաւական հա- մարուի, Դիւանը պիտի պարտաւորի դարձեալ Ժողովոյն որոշմանը դիմել և ըստ այնմ վար- ուիլ: Ահա այսպէս կրնանք դիւրութեամբ ել- նել այս խնդրոյն մէջէն. իսկ եթէ ասկէ ա- լելի հէշտին միջոց մը կայ, այն ալ կրնաք յայտնել:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենապետ էֆէն- տին առաջարկութիւն մը ըրաւ Դիւանին կող- մէն, և ըսաւ թէ Ազգին գործերն երեսի վը- ռայ մնացած են, որով Քաղ. Ժողովոյ ընտրու- թեան ստիպողականութիւնը ծանոյց և հրա- ուիրեց զմեզ ճնշման տակ գործելու: Այդ ճնշման ձևը հերքելու համար կ'ըսեմ որ կրօ- նական ժողով կայ. ըստ Սահմանադրութեան կրօն. և Քաղ. Ժողովները կրնան Ազգին ամեն տեսակ գործերը նայիլ. եթէ 8-10 ամիս առ- ուանց կրօն. ժողովոյ կրցաւ Քաղ. Ժողովը գոր- ծել, նոյնպէս հիմայ կրօն. Ժողովն ալ կրնայ քանի մը շարաթ առանց Քաղ. Ժողովոյ գոր- ծել, հետևապէս հարկ չը կայ ճնշման ներքև որոշում ընելու: Իսկ գալով այն խնդրոյն թէ Քաղ. Ժողովը բաղմամբ ըլլալ պէտք է թէ ոչ, Ատենապետ էֆէնտին բաղմամբ ըլլալու եղանակին մէջ տեսնուած դժուարութիւննե- րը բացատրելու համար պատմական տեղեկու- թիւն մը տուաւ հարևանցի կերպով: Ճնշարիտ է թէ ժամանակ մը Բնդհ. Ժողովն համար- տութեան ցուցակ մը ուզուեցաւ, Քաղ. Ժո- ղովոյ 20 անդամները համամիտ անձերէ ընտ- րելու համար. այս խնդիրը վիճարանութեան, մեծ նիւթ մը եղաւ այն ասանը Ժողովին մէջ ես ալ ներկայ գտնուեցայ այն Ժողովին. կը

յիշեմ որ ումանք Սահմանադրութեան դէմ ըլլալը կը պնդէին, բայց Քաղ. Ժողովոյ ամենապետին ստիպելուն վրայ վերջապէս համաձայնեցան յանձնաժողով մ'անուանելու, որ ընտրելեաց ցուցակ մը շինէ: Բնականաբար այս ցուցակին վրայ պէտք էր ընտրել Քաղ. Ժողովը. բայց անանկ չեղաւ. Ընդհ. Ժողովը թէև մեծազոյն մասով որոշեց և ցուցակ մը պատրաստել տուաւ, սակայն գրեթէ բոլորովին ցուցակէն դուրս անձանց վրայ կատարեց իր ընտրութիւնը, ըսել է. թէ Ընդհ. Ժողովը ցուցակի մը պէտքը զգաց, բայց յետոյ ինք չը գործադրեց. ասկէ կը հասկցուի թէ դժուարութեան պատճառը Քաղ. Ժողովոյ 20 հոգիէ բաղկանալը չէր, այլ Ընդհ. Ժողովոյ՝ իր որոշմանը վրայ հաստատուն չի կենալն էր. և այս մասին չեմ ուզեր աւելի խորը դիմել, ու քննադատել այս ընտրութեան պատճառները: Երեմիա Եղիսիսոյս Քառասական Յանձնախումբէն առաջարկութիւն մը բերաւ, այն է ընտրել ըստ վաղեմի սովորութեան 20 հոգի, բայց այն պայմանաւ որ ժողովն երկու մասի բաժնուի, 10 հոգի գործադիր ժողով և 10 ալ խորհող ժողով: Ես թուոյն վրայ կարեւորութիւն չեմ դնել, կուզէք 20 ընտրեցէք, կուզէք 10 ընտրեցէք. մինչև որ գործերը չը բաժնուին, ինչ թուով ալ Քաղ. Ժողով ընտրէք, դարձեալ մինչև հիմա ունեցած արդիւնքէն աւելի արդիւնք մը չը պիտի ունենայ: Աղաբէկեան Մարիոս Լ.Ֆ. անցեալ նիստին մէջ մեր Սահմանադրութեան անգործադրելի ըլլալուն իրրև նշան՝ ըսաւ թէ ո՛չ կտակաց հագարածութիւն, և ո՛չ վանորէից խորհուրդ չը կըրցան կազմուի մինչև ցարդ: Հարցնենք Քաղ. Ժողովոյն թէ ինչո՞ւ չընտրեց զանոնք. անշուշտ չէ թէ մարդ չը գտայ պիտի ըսէ, այլ թէ ժամանակ չունեցայ. վասն զի շատ դժուար էր, ամեն գործ իւր վրայ կեդրոնացած էր, մինչև ցարդ Ազգ. կրթութեան, կրտակաց, վանորէից և կալուածոց խնդիրներուն յետադիմութեան պատճառն ուրիշ բան եղած չէ, եթէ ոչ Տեսուչ խորհուրդներուն Քաղ. Ժողովէն ընտրութիւնը: Եթէ վերաքննութեան արժանի բան մը կայ, այս է. ինչո՞ւ Քաղ. Ժողովոյ ընտրութեան եղանակին և թուոյն վրայ կը վիճիք. միթէ ատոնք փոփոխելով գործնական ընթացք պիտի տար Ազգ. վարչութեան. ինչ հնուան երթա՞նք. ահա հրաժարեալ Քաղ. Ժողովը թէ ասկաւաթիւ էր, և թէ Ս. Պատրիարքէն ընտ-

րեալ. ո՛ւր են իր գործերը, այն գործերը, որ ընդհանուրին կը վերաբերին: Եթէ Ժողովն այսօր վերաքննութիւն որոշէ, և այդ վերաքննութիւնն ալ հիմնական ընել, այսինքն առանց խնայելու Սահմանադրութեան տրամադրութիւնները յեղաշրջել ուզէ, ևս պիտի պարտաւորիմ յառաջ անցնել, և 12 տարիէ՛ ի վեր Սահմանադրութիւնն անգործադրելի ընող, և Ազգիկն ակնկալութիւնները պսակելու խաչընդոտ եղող արդի գրութիւնը փոփոխելու առաջարկութիւնն ընելու. այն է տեսուչ խորհուրդները բաժնել Քաղ. Ժողովէն և անոր իրաւասութեանէն, և ուղղակի Ընդհ. Ժողովէն ընտրել. որպէս զի խրաքանչիւրն ազատ ըլլայ իր պաշտօնին մէջ, և արդի գործադր վիճակը չունենայ. վասն զի այժմ բան մը որոշել է տքը անոր գործադրութեան չի ձեռնարկած, Քաղ. Ժողովոյ կարծիքն ու հաւանութիւնն առնուլ պարտաւոր է, և Քաղ. Ժողովն ալ բազմազաղ ըլլալուն, շարաթնեքով և ամիսներով կ'սպասեցնէ որ՝ Ժողովը ժամանակ գտնէ խորհրդի մը առաջարկութիւնն ու շտգութեան առնուլ: Այս յետաձգումներն և այս յապաղումները, որոնք գործադրարար ազգային կենսական, այն է հանրական խնդրոց, դաստիարակութեան, կալուածոց և այլն կը վերաբերին, շատ սուղի նստած են Ազգիկն. և ահա ասոր դարման պէտք է: Այսպէս նաև ուրիշ ստիպողական պէտք մ'ալ կայ, այն է Քաղ. Ժողովոյն վրայ հսկող Ժողով մը ունենալու պէտքը: Քաղ. Ժողովոյ վճռոյն դէմ պիտի բողոքէ մէկը, ո՛ւր բողոքէ. անոր համար կ'ըսեմ թէ հսկող Ժողով մը պէտք է, որ Քաղ. Ժողովոյ ընթացքը քննելու համար քննուի մը ըլլայ: Ահա երկու կարեւոր պէտք յիշեցի, երկուքն ալ ստիպողական և ամենն աւելի ըզզալի եղած են. բայց որովհետև Սահմանադրութեան վերաքննութիւնն ընելու կամ չընելու վրայ չէ վիճարանութիւնը, ասոնք նոյն ատենին պահելով, մեք այժմ Սահմանադրութեան շրջանակէն դուրս չեմնելով, հնար եղածին չափ այս վիճակին դարձան տանել հոգալու եմք. և ահա այս պատճառաւ Սահմանադրապէս 20 անձէ բաղկացեալ ժողով մը կ'ուզուի, որ իր մէջ աշխատութեան բաժանմամբ կարող ըլլայ և ժամանակ ունենայ Տեսուչ խորհրդոց առաջարկութիւններով դրադելու:

Ես այժմ ի՞նչ որոյն աւելի խորն երթալով,

կ'ուզեմ անոր քողն պատուել. մինչև ցարդ եղած վիճարանութիւններէն անանկ տեսնուեցաւ թէ 20 ի կամ 10 ի խնդիր է այս. ոչ, այս խնդիրը 20 ի կամ 10 ի խնդիր չէ. այս խնդիրը՝ Սահմանադրութեան ոգւոյն և կամ սկզբանց խնդիրն է: Մեր մէջը սխալ կարծիք մը կայ թէ Պատրիարքն իրրև գործադիր պաշտօնէութեան գլուխ՝ ըստ ամերիկեան դրութեան ինք պէտք է ընտրէ իրեն խորհրդակիցները: Այս այնքան սխալ է որ Սահմանադրութեան հիմնական կէտին կը հակառակի, և ահա Սահմանադրութեան սկիզբը դրուած խմբագիր յանձնաժողովին Տեղեկագրին մէկ էական մասը այս հիմնական կէտը կը բացատրէ:

« Եւ որովհետև կայսերական տէրութիւնը Հայոց ազգին համար տալու հրամաններուն գործադրութեան բնական միջնորդ և Ազգային վարչութեան գլուխ Պատրիարքը կը ճանչնայ և անոր կ'ուղղէ իր հարցումները. եթէ Տէրութիւնը Պատրիարքին հրամայէ որ հարցուած խնդրոյն վրայ իր (այսինքն Պատրիարքին) կարծիքը յայտնէ, Պատրիարքը՝ իր նախադաշնութեամբը գործող Ժողովներուն որոշման համեմատ շարժի: Իսկ եթէ Ազգիկն կարծիքն առնելով Տէրութեան հարցուելի հրամայէ, այն ժամանակ Պատրիարքը Ընդհ. հանուր Ժողով հրաւիրէ, և այն Ժողովոյն վերջնական որոշումը յայտնէ Տէրութեան: Ըսել է թէ Պատրիարքը սահմանադրապէս իրրև Քաղ. Ժողովոյ անդամ մը՝ ինչպէս միւս ժողովականք իւր կարծիքը պիտի յայտնէ Քաղ. Ժողովին. և ժողովոյն կարծիքն իրրև իւր կարծիքը պիտի ընդունի. իսկ երբ կառավարութիւնն Ազգիկն կարծիքը հարցնէ, այն ատեն Պատրիարքը Ընդհ. Ժողով պիտի գումարէ անոր կարծիքն իմանալու համար. ահա խնդրոյն բուն կէտը՝ որուն մէջ կը տարբերինք, և որ վիճարանութիւնն ալ հոն կը նայի: Պէտք է որ միանգամ ընդ միշտ յայտարարենք թէ մեր Պատրիարքը ոչ թէ գործադիր իշխանութեան գլուխ կ'ընտրուի, այլ ներկայացուցիչ ազգին և միջնորդ ի. Դրան և Ազգիկն մէջ ամենայն որոշում և տնօրէնութիւն ազգէն, կամ որ նոյնն է Ընդհ. Ժողովն, կամ անկէ ընտրեալ կրօն. և Քաղ. Ժողովներէն կը բղխին, և Պատրիարքը զանոնք կը ներկայացնէ ուր որ անկ է. ահա Պատրիարքին գործադիր իշխանութեան սահմանը ներկայացումէ, մ'անդին

չանցնիր. անոր պատասխանատուութիւնը ներկայացնելուն ու ներկայացնելուն մէջն է. որոշմանց և տնօրէնութեանց լաւ կամ վատթար ըլլալուն պատասխանատու չէ Պատրիարքը, այլ այն որոշումը տուող Ժողովն է:

Միթէ այսպէս չէ՞ր երբ 1816 ին Ժողովներ գրուեցան, միթէ հին ատեններն ալ Պատրիարքը խորհրդատուներ չունէ՞ր. ի վաղուց անտի խորհրդատուներ կային Պատրիարքին քով. յետոյ՝ Ազգիկն կողմէն դրուեցան այս խորհրդատուները. և այս առանձնաշնորհութիւնը այնքան փափուկ ու նուրբական է, որ եթէ ինքը Պիզմարք գայ և ըսէ թէ ես ձեր Պատրիարքը պիտի ըլլամ, և ուզէ որ ինք ընտրէ իր խորհրդատուները, Ազգը բնաւ չը կրնար ընդունիլ: Թէև Ս. Պատրիարքն ասկէ առաջ ինք ընտրեց Քաղ. Ժողովը, բայց ասիկա Խորհման Հայրիկին համար բարեբաղդութիւն մըն էր, բացառիկ պարագայի մը արդիւնք: Կուզենք որ Քաղ. Ժողովոյ թիւը 20 ըլլայ. ինչո՞ւ, անոր համար որ մասնաւորաց ազգեցութիւնները նուազին: Քաղ. Ժողովոյ 20 թիւը շատ չէ, վասն զի իր մէջ խորհող ժողով մը պէտք է ունենայ, որուն դուռը մարդ չի չափէ, և կարող ըլլայ Ազգիկն ընդհանրական կարեւոր խնդիրներովն դրադիլ, որք են՝ Ազգ. դաստիարակութիւնը, Ազգ. հաստատութիւնները և ազգիկն իրաւանց և արտօնութեանց պահպանութիւնը: Ուստի երբ Քաղ. Ժողովը 20 հոգիէ ընտրուի, կրնայ խիստ դիւրութեամբ իր մէջ երկուքի բաժնուիլ, 10 հոգի տեսուչ խորհրդոց համար, և 10 հոգի ալ ազգային ընթացիկ գործոց համար: Կը վերջացնեմ խօսքս ըսելով. եթէ կը սիրէք և կը մեղքընաք Ազգը, դաւառական յանձնախումբին տեղեկագրոյն վերջին մասը միտքերնիդ բերէք. անվրդով յարատուութիւն և ջանք պէտք են մեզի համար. երբ Պատրիարքը միջամտէ ամէն բանի, երբ ընտրութիւնն անոր թողով, անոր վրայ մեծ պատասխանատուութեան բեռ մը դնենք՝ մեր այս յարատուութեանը արդեւքներ երևան կ'երևնն, գէշ կըլլայ, և այն ատեն փոթորիկը կը վրթի ազգին մէջ:

ԱՏՆՍԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրը Քաղ. Ժողովոյ բազմութիւ կամ սակաւութիւ լինելու կէտին վրայ է. աւելորդ է Ս. Պատրիարքին իրաւասութեան սահմանը որոշելու համար խօսքեր ընել, կը խնդրեմ որ բուն խնդրէն չ'հեռանար:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Հարուհակերով) Որ-
չափ կարելի է, խոյս տանք Պատրիարքի և
կամ Առեւտարական անձանց օրինակ վրայ
սրատասխանատուութիւն բեռնելէ. այս բեռն
ընդհ. ժողովը տանելու է. այս ժողովը, որ
ասէ իր գաւերը բաց նիստ կ'ընէ, ժողովը-
գեան աչաց առջև, և ժողովուրդն ալ անկէ
բան չկրնար պահանջել աւելի, գիտնալով և
համարուելով թէ, ինչ որ ժամանակը պիտի
ընէ, մարդիկ չեն կարող ընել. քանի անգամ
է որ ընդհ. ժողովը համար կ'ըստի թէ ի՞նչ
գործեց, ոչ տք է գիտնանք թէ ընդհ. ժո-
ղովը կը գործէ, այսօր խճ. նիստն է որ կը
շարունակէ. յարատուութիւնը գործ կենդիւնա-
րէ: Սահմանադրութիւնը, իր հաստատուած
օրը, փրկարար կը կոչէին, հիմա ըսողներ կան
թէ անգործադրելի է. Խրիմեան Հայրիկի հա-
մար Հայաստանի հրեշտակն եկաւ ըսին, հի-
մա ուրիշ բաներ կ'ըսեն. գիտէք թէ այս խօս-
քերն որչափ անտեղի են. մեզքը ոչ Սահմա-
նադրութեան և ոչ Պատրիարքի վիզն է. պէտք
չէ որ գայթակղինք Սահմանադրութեան վրայ.
վասն զի անկիս ազգին ակնկալութիւնները
սրտակոզ տարերքներն ունի իր մէջ. բայց մենք
մինչև ցարդ չենք կրցեր զանոնք արդիւնաւո-
րել. պէտք է որ ձեռք առնուք զանոնք, և
Սահմանադրութեան օգտուէտ գրութիւնն
հասկնենք ժողովրդեան. այս ծառայութիւնն
ընելու է ներկայ ընդհ. ժողովը. և միանգա-
մայն խնայելու է մեր Ս. Պատրիարքին անձը.
վասն զի ոչ թէ անձերու այլ գրութեան վրայ
դնելու ենք մեր յոյսերը, ինչպէս անուանի
անձ մ'ըսաւ երբեմն: Մեր մէջ անգուսպ ե-
ռանդ մը կայ, կ'ուզենք որ ակնկալուած կար-
գադրութիւններն խոչընդոտեն. և անոր հա-
մար մասնաւոր անձինք պատասխանատու ը-
նելէ զգուշացնել կ'ուզեմ զձեզ, մանաւանդ
Ս. Պատրիարքը պատասխանատու ընելէ. ո-
րովհետեւ ազգն անհամբեր տեսնելով որ կը
վրիպի իր ակնկալութիւններէն, Պատրիարքին
անձին վրայ գայթակղիլ կ'սկսի, և անոր տեղ
ուրիշ մը դնելու և այն նորեկէն ամէն բան
յուսալու կը մտի. և այսպէս հետզհետէ փո-
փոխութեանց մէջ թաւալելով, հաստատուն
ընթացք մը չենք կրնար ունենալ. պէտք չէ
կարծել որ ամեն բան շուտով և մէկէն ի մէկ
կը կարգադրուի. այս կարծիքը ջնջել կուզեմ.
այո՛ պիտի գործենք, բայց կամաց կամաց,
յարատուութեամբ և անվրդով կերպիւ. քանի
որ այս ընդհ. ժողովը կը յարատեւէ, որ և է

վրդովման և փոփոխութեան տեղի չը տրուի
տայ, որոնք բարձրին միտասկար են ազգին,
ուրեմն յարատեւենք, արդեւք եղող միջոցներէն
ալ զգուշանանք:

Այս միջոցին Առեւտարական էֆ. յայտարարե-
լով թէ մեծագոյն մաս գոյացած է, միջան-
կեալ կերպով ժողովն կը ներկայացնէ քանի
մի երեսփոխանաց հրատարման խնդիրը, և
նախ՝ Տ. Արիստակէս Արքայանի և Տատեան
Առաքել Սիսակ պէյի հրատարականները՝ որ
նախորդ նիստէն անորոշ մնացած էին, քուէի
դնելով, ժողովը միաձայն հաւանութեամբ
կ'ընդունի գանոնք: Նոյնպէս ի վերջոյ Մա-
նուկեան էֆէնտիի հրատարականը քուէի կը
դնէ, և ժողովն առանց դիտողութեան ընդ-
հանուր հաւանութեամբ կ'ընդունի դայն:

ԵՐԵՄԻՍ. ԵՊԻՍ. — Քաղ. ժողովը բազմա-
թիւ կամ սակաւաթիւ լինելու կէտին վրայ ա-
ռաջարկեցի որ ընտրենք 20 հոգի, կէտը՝ այ-
սինքն 10 հոգին իբրև գործադիր ժողով և
միւս կէսն ալ իբր խորհող ժողով: Կը փոփո-
քիմ որ կարծիքները միանան այս կէտին վրայ
և շուտով ըմնայ գործը. ուստի առաջարկու-
թեանս վրայ կը հրաւիրեմ վերստին ժողովը
ուշադրութիւնը:

ԱՍՏԵԱՊԵՏ ԷՖ. — Գիւհանն ըստ որում ե-
զած առաջարկութիւնները քուէի պիտի դնէ,
կը սարտաւորի լաւ ի միտ առնուլ ձեր առա-
ջարկութիւնները: Երեմիա Արքայան կ'առա-
ջարկէ որ Քաղ. ժողովը 20 հոգիէ կազմուի,
10 հոգին խորհող ժողով և 10 հոգին գործող
ժողով, իսկ Փարիսիական էֆ. հսկող ժողով մը
պէտք է կըսէ, Քաղ. ժողովը գործերը վերա-
քննելու համար: Միթէ կուզէք որ Ազգը իս-
թիմաֆի ժողով մը ունենայ, ինչպէս ունի կա-
ռավարութիւնը:

ԵՐԵՄԻՍ. ԵՊԻՍ. — Իմ առաջարկութեանս
մէջ խթինաֆի խօսք չը կայ. ես ըսել ուզեցի
թէ Քաղ. ժողովը երկու մասէ բաղկանայ, մէ-
կը՝ գառ խորհող ժողով, իսկ միւսը՝ գործա-
դիր մարմին վարչութեան:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ներկային համար
չէր որ հսկող ժողովի մը պէտք ըլլալը յայտ-
նեցի. եթէ վերաքննութիւնը կատարուի, այն
ատեն այս ժողովներուն համար իմ առաջար-
կութիւններս դարձեալ պիտի ընեմ. բայց թէ
որ արդի սահմանադրութեան համեմատ Քաղ.
ժողովը ընտրութիւնը պիտի կատարուի, իմ
առաջարկութիւնս այս է որ թիւը 20 ըլլայ,

10 ընթացիկ գործոց յատկանայ, և 10 ան-
սուշ խորհողոց պաշտօնը վարէ:

ՕՍԿԱՆԵԱՆ Խ. ԷՖ. — Կերեւի թէ Արդոյ
պաշտօնակիցներէս շատերը տեղեակ չեն բար-
բառութի կանոնաց և սովորութեանց. երբ նոր
խնդիր մը կամ առաջարկութիւն մը կը ըլլայ,
պէտք է գրով ներկայացուի գիւհանին. կան բա-
նեք՝ որ ընդարձակ վիճարանութեան դուռ կը
բանան. քանի որ օրինաւոր ժողով և Գիւհան
մը ունինք, պէտք է կանոնաւորապէս ներկա-
յացնենք մեր խնդիրը:

Ջայս ըսելով Օսկանեան էֆէնտիին իւր ա-
ռաջարկութիւնը գրով կը ներկայացնէ Գիւհա-
նին, և Առեւտարական էֆ. կը կարդայ դայն, որ
է. «Սահմանադրութեան 36-րդ. յօդուածը
փոխուի յետագային, և այսօրու ընէ Քաղ. ժո-
ղովը անդամաց թիւն 9 անձերէ բաղկանայ»:

ՕՍԿԱՆԵԱՆ Խ. ԷՖ. — (Շարունակելով): Ես
ինքնին համոզուած եմ որ Քաղ. ժողովը թիւը
քանի՛ քիչ ըլլայ, այնքան ազկ կը ըլլայ. հոգ
չէ թէ որ այս համոզմանս ընդդիմացողներ
գտնուին. բայց սա կուզեմ հասկնալ թէ արդ-
եօք կարող չենք Սահմանադրութեան մէկ կէ-
տը փոխել. պիտի ըսեն թէ հիմա ժամանակը
չէ. ընդհակառակն կ'ըսեմ թէ ճիշդ հիմա է
ժամանակը. մենք քիչ մ'ալ վիճարկայօրէն
սարտաւոր վարուիլ. փիլիսոփայութիւնն ուրիշ
բան չէ, եթէ ոչ անցեալին խրատը. երբ սա-
րագաները Սահմանադրութեան մէկ յօդուա-
ծոյն գործադրութիւնն անկարելի կ'ընեն, պէտք
է դայն փոփոխել: Ամերիկայի Սահմանադրու-
թիւնն ալ 16 անգամ փոփոխութիւն ընդու-
նած է, վերջին փոփոխութիւնը գերութեան
ընդման վրայ եղաւ, ինչպէս արդէն յայտնի է:
Ուրեմն մենք ալ՝ որ ուրիշներէն առած ենք
մեր Սահմանադրութիւնը, կրնանք նորոգել
երբ սարագանները փոփոխութեան հարկ կը
դնեն մեր վրայ, մանաւանդ որ Սահմանադ-
րութեան 39-րդ. յօդուածն արդէն այդ արտօ-
նութիւնը տուած է մեզ:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Յարդոյ պաշտօնա-
կիցք իմ, խնդիր մը առանց լուսարանուելու
քուէի դրուիլ փախարելի չէ, բայց խնդիր մը
իւր շրջանէն դուրս հանելն և մինչև տաղտուկ
պատճառելն ալ նոյնպէս փախարելի չէ. ինչ
է արդեօք պատճառը՝ որ վիճարանութիւնը
այչափ կերկարին. մեզնէ շատերն զգացած
են, բայց բացատրուած չէ: Օսկանեան էֆ.
չօչափեց. մենք թէ՛ այս և թէ՛ նախորդ նիս-

տերէն շատերուն մէջ Սահմանադրութեան վե-
րաքննութեամբը կ'զրադինք, սուանց գիտնա-
լու թէ կը վերաքննենք: Քաղաքացի հեղինակի
մը խօսքը կը յիշեմ. վարպետ մը դաս կուտայ
եղեր, աշակերտին մէկն ըսեր է իրեն որ ար-
ձակ բանիւ կը խօսի. մարդը զարմացմամբ ը-
սեր է թէ՛ 40 տարի է կը խօսիմ, բայց արձակ
բանիւ խօսիլս չէի գիտեր. ճիշդ ասոր պէս
մենք ալ չենք զգար թէ Սահմանադրութիւնը
կը վերաքննենք: Անցեալ նիստին մէջ Պէկեան
էֆ. ժողովը անել վիճակի մը մէջ դրաւ, բայց
խնդիրն իւր կարծածին չափ անել ճամբու
մէջ չէ. խնդիրը սարգելու համար սա հարց-
մունքը կարծեմ բաւական է. այսինքն թէ՛
գործադրութեան մէջ եղած սահմանադրու-
թիւնն անգործադրելի ճանչնալով վերաքննե-
լի է թէ ոչ:

Այն երեսփոխաններն որ Սահմանադրու-
թեան տառին և չէ թէ ողբոյն հետեւի կու-
զեն, խնդիրը ճարտարաբան պատճառ կ'ըլլան,
գիտեմ որ ասիկա չար դիտաւորութեամբ չէ.
սակայն ինչո՞ւ լուռ կը կենան ուրիշ բաներու
մէջ. եթէ վերաքննութիւն կ'ուզեն՝ ինչո՞ւ չը-
րին մինչև հիմա, քանի որ այս ժողովին մէջ
ընել կուզէին, բայց տարիներ կանցնին և վե-
րաքննութիւն չի կատարուի. ըսել կուզեմ որ
Սահմանադրութեան անթերի գործադրութիւն
պահանջող երեսփոխանք պէտք է որ ձգեն ու-
րիշ խնդիրներ և վերաքննութեամբ զրադին,
որպէս զի անտեղի վիճեր չը յուզուին: Անց-
եալ նիստին մէջ Փարիսիական էֆէնտի օրինակ
բերաւ առջի ժողովները, իբր թէ բազմաթիւ
անդամներով գործ տեսած են. միթէ իրօք
Հայոց կեանքին մէջ եղած է այնպիսի ժողով
մը որ բազմաթիւ անդամներով գործ տեսնէ.
կարելի չէ այս, բոլոր սահմանադրական ազ-
գաց կեանքը կը հաստատէ թէ կարելի չէ.
Փարիսիական էֆէնտիի բերած օրինակը չի կըր-
նար համոզել զիս:

Ջանազան յօդուածներ կան Սահմանադ-
րութեան մէջ, որոնց հակառակը գործադրուած
է այսօր: 24-րդ. յօդ. կ'ըսէ. «Կրօն. ժողո-
վոյ անդամք 30 տարեկան և հինգ տարուընէ
ի վեր ձեռնադրուած ըլլալու են»: Սակայն
այսպէս չէ եղած կրօն. ժողովը ընտրութիւնը:
35-րդ. յօդ. կ'ըսէ. «Կրօն. ժողովը կ'ընտ-
րէ 4. Պօլսոյ եկեղեցեաց քարոզիչները. . .
և Պատրիարքը կ'անուանէ զանոնք»: Ս. յայտն
կը գործադրուի. ո՛չ:

46րդ . յօդ . կըսէ . «Տնտես . Խորհուրդը . . . թաղ . Խորհուրդոց մատակարարութեան վրայ հսկողութիւն պիտի ընէ և . . . որոշեալ ժամանակներ համար պահանջելով՝ Քաղ . Ժողովոյն պիտի հաղորդէ » : Այս ալ նմանապէս չէ գործադրուած :

50րդ . յօդ . կըսէ . «Ընդհ . Ժողովոյ օրինաւոր մեծագոյն մասը 71 հոգի է » : Այս յօդուածն ալ անգործադրելի մնացած է ցարդ :

61րդ յօդ . կըսէ . «Ընդհ . Ժողովոյ նիստերը 2 ամիս տեւելէ ետքը կը վերջանան » : Այս ալ չէ գործադրուած :

65րդ . յօդ . կըսէ . «Եկեղեցական երեսփոխանք 50 տարեկան և ընտրութենէն 3 տարի առաջ ձեռնադրուած ըլլալու են » : Այս ալ չէ գործադրուած :

Սահմանադրութիւնը կը սահմանէ նաև որ օտար տէրութեան հպատակ չըլլան Ընդհ . Ժողովոյ անդամները . թերևս մեր մէջ կան որ Օսմանեան հպատակ չեն . թէև իմ համոզմանս հակառակ է այս պահանջում , բայց անցելոյն փորձը միշտ կերթայ ժամանակին հետ :

Վերջոյնեալ յօդուածոց կարգէն էր նաև Քաղ . Ժողովոյ ընտրութեան վերաբերեալ յօդուածը , որոյ անգործադրելի ըլլալը փորձով աստացոյցուած լինելով , ասկէց առաջ Ընդհ . Ժողովը ստորաւարտուեալ է թիւ 6 ի լծեցնել և ընտրութիւնը Ս . Պատրիարքին յանձնել : Այսպէս է ամեն ազգաց մէջ . գործադիր պաշտօնէութեան գլուխը կընտրէ իր պաշտօնէականները . որպէս զի իրեն համար լինին և գործ տեսնեն :

Ուստի կառավարիւմ որ Քաղ . Ժողովոյ ընտրութիւնը Ս . Պատրիարքին յանձնուի : Այս կերպով ընտրուած ժողովը միայն Ս . Պատրիարքին պատասխանատու չէ , այլ Ընդհ . Ժողովոյն : Անցեալ նիստի մէջ Յուսուֆեան էֆ . ըսաւ որ եթէ Սահմանադրութեան տառական գործադրութեան ետէ ըլլանք , թերևս նորէն պետական հարուածը հիւսիսներ :

Այս միջոցին փախապետ և Խօսաւորեան էֆէնդիները կընդմիջեն Իփէկեան էֆէնդիին խօսքը , բողբոջելով պետական հարուածի ակնարկութեան դէմ . և Ատեհապետ . էֆ . կը հրաւիրէ զատենաբանը շարունակելու :

Իփէկեան էֆ . — (շարունակելով) Քաղ . Ժողովոյ ընտրութեան վերաբերեալ յօդուածն արդէն վերաքննուած է , և ասանց Բ . Դրան

վաւերացման ներկայացուելու գործադրուած է . կարելի է յաջորդ վերաքննութեան մէջ ուրիշ փոփոխութիւն մ'ալ կրէ : այս ուրիշ խնդիր է . բայց հարկ չըկայ որ արդէն վերաքննուած խնդրոյ մը վրայ այսչափ վիճարանութիւն ելուարի . միայն վերաքննութեան գործն յիշեցնել , անոր հետ կապակցեալ են ուրիշ շատ մը խնդիրներ . զիտեսնք թէ մեր իրաւունքն է և կրնանք ընել այն բանը՝ զոր առողջ բանակապետութիւնը կը ցուցնէ մեզ . ամեն գործադիր իշխանութեան գլուխն ինք կընտրէ իր պաշտօնէականները . ուստի կը կրկնեմ իմ առաջարկութիւնս որ Քաղ . Ժողովոյ վերակազմութիւնը Ս . Պատրիարքին յանձնուի :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ . ԷՖ . — Իրաւացի կզըտնեմ փախապետ և էֆէնդիին այն խորհրդածութիւնը՝ թէ Քաղ . Ժողովը միշտ ընթացիկ գործերով զբաղեցաւ և ժամանակ չունեցաւ ազգային կենսական խնդիրներ ուղղութեան առնելու . բայց Քաղ . Ժողովոյ 20 անդամներն երկու տասնի բաժնելով՝ մէկ մասը գործող և միւս մասը խորհող ժողով անուանելու համար ըրած առաջարկութեան գալով , կարծեմ ասի այնպիսի կէտ մ'է որ եթէ իր վերաքննութեան խնդիր կուզէ այսօր լուծել տալ , ասի անկարելի է . այս առաջարկութիւնը Քաղ . Ժողովոյ կերպարանքը կը փոխէ և Սահմանադրութեան տրամադրութեանց անհամաձայն է . գործող մարմինը պատասխանատու պիտի ըլլայ խորհողն ալ պիտի ըլլայ մի . այս կերպով պատասխանատուութեան կէտերն իրարու հետ կը շփոթին . ուստի չեմ կարծեր որ այս կէտը կարենայ այսօր անմիջապէս լուծուիլ և որոշուիլ : Այս նկատմամբ կառավարիւմ որ Քաղ . Ժողով յանդամոց թուոյն և ընտրութեան եղանակին վերաբերեալ յօդուածը չափաւորի , ինչպէս որ արդէն չափաւորուած էր նախորդ Քաղ . Ժողովոյ ընտրութեան առթիւ : Քաղ . Ժողովոյ անդամոց թիւը ինն անդամէ բաղկանայ , և սկզբում իրարու համարիտ անձինք լինին , որպէս զի կարենան գործ տեսնել : Իսկ ընտրութեան կերպին դալով՝ չեմ ըսեր թէ Ս . Պատրիարքին յանձնուի . կամ Ատեհապետ մը ընտրելով՝ անոր յանձնուի , կամ Ընդհ . Ժողովը մասնաժողով մը անուանէ , որ Ս . Պատրիարքին հետ խորհրդակցելով կրկնապատիկ ընտրելեաց ցանկ մի պատրաստեն և Ընդհ . Ժողովոյ ընտրութեան ներկայացնեն : Այս կերպով զիկտատրութեան վախերն ու կաս-

կածները կը փարատին , և Ընդհ . Ժողովոյ իրաւունքն ալ յստից անջատուած չըլլար :

ՔԷԿԵԱՆ Թ . ԷՖ . — Անոնք որ կը կարծեն թէ խնդիրը Քաղ . Ժողովոյ անդամոց թուոյն վրայ է և չէ թէ ընտրութեան վրայ , շարաշար կը սխալին . ո՞վ որոշեց զայդ . բուն խնդիրն ընտրութեան եղանակին մէջն է . ինչո՞ւ ուրեմն վիճարանութիւնը կը սահմանափակէր , ինչպէս ըսի՝ օրէնք մը կայ որ կը տիրէ արդէն և բացորոշ տրամադրութիւն ունի Սահմանադրութեան մէջ . իրաւունք ունէին անոնք որ օրինաց տրամադրութեան գործադրութիւնը կը պահանջէին . բայց միւս կողմէ իրաւունք մ'ալ կայ . երբ օրէնք մը անբաւական է , պէտք է կատարելագործուի , եթէ վերաքննութեան պայմանաժամն եկած չըլլար , չը պիտի կրնայինք փոխել , բայց որովհետեւ եկած է , կըրնանք փոխել վերաքննութեամբ , քանի որ անգործադրելի կէտ մը երևան ելած է , և Ընդհ . Ժողովն ալ իր օրէնդիր ժողով կրնայ սըրբադրել : Բայց ես առաջարկութիւն ընելէ առաջ ուղեցի զիտեալ թէ Ընդհ . Ժողովը պիտի ընդունի թէ չէ ընտրութեան եղանակ մը որոշել . այս մասին իմ կարծիքս անցեալ նիստին բաւական յայտնեցի , բայց ընդմիջողներ կային , այսօր ընդմիջողներ չը կան . ուստի այսօր թեթեւ կերպով նախընթաց նիստին ըրած առաջարկութիւնս կրկնելէ ետեւ , կանցնիմ նոր ընելիք առաջարկութեանս : Երկու կողմն ալ իրաւունք ունէին , թէ՛ փորձառութեան վրայ կրթ ընողները և թէ՛ օրինաց տրամադրութեան վրայ . սակայն ես օրինաւորութենէն չը խտտրելու և սկզբանց դէմ չը վարուելու համար պիտի առաջարկէի որ՝ Քաղ . Ժողովոյ ընտրութեան մասն անմիջապէս վերաքննութեան ենթարկուի , և պէտք եղած որոշումն ընելէ ետեւ ըստ այնմ ընտրութիւնը կատարուի :

Արդ , Իփէկեան էֆ . կը պնդէ թէ վերաքննութեան մէջ ենք արդէն անդալի կերպով . և իր այն՝ աւերորդ կը համարի իմ անցեալ օրուան առաջարկութիւնս , բայց կը պատասխանեմ թէ աւերորդ չէ , որովհետեւ ինչպէս որ Իփէկեան էֆ . կը կարծէր թէ Քաղ . Ժողովոյ ընտրութեան վերաբերեալ յօդուածն արդէն վերաքննուած է նախորդ Քաղ . Ժողովոյ ընտրութեան առթիւ , ես ալ նոյնպէս կը կրծէի , սակայն ի վերջոյ ստացած անդեկու . թիւներս համոզեցին զիս՝ որ իր փոփոխութիւնն օրինաց կարգն անցնելու : Կուգամ այժմ բացատրել իմ կարծիքս ընտրութեան եղանակին վրայ :

Այս միջոցին ժողովը դադար կառնու պահ մը , և ժամը 9 ին նորէն Ատեհան բացուելով՝ ՔԷԿԵԱՆ Էֆէնդիին խօսք կը արուի իւր ընդհանաւալ առնաբանութիւնը շարունակելու համար :

ՔԷԿԵԱՆ Թ . ԷՖ . — (Շարունակելով) Կուգեմ այժմ խօսիլ ընտրութեան եղանակին վրայ : — Մեր ազգային վարչական դրութեան մէջ գործադիր պաշտօնէութիւնը երկու ժողովներու յանձնուած է , այն է՝ կրօնական և Քաղաքական , որ ուղղապէս Ազգ . Երեսփոխանութենէն կընտրուին . Պատրիարքն այս ժողովներուն որոշանցը գործադիրն է : այսպէս եղած է զրեթէ 25 տարիներէ ի վեր . այսպէս տրամադրած է նաև Ազգ . Սահմանադրութիւնը : Հայոց Ազգին Վարչական այս դրութիւնը , զոր ոմանք տարօրինակ կը գրտնեն ըսելով թէ՛ . ամեն ազգաց մէջ գործադիր իշխանութիւնն սակաւաթիւ անձերէ կը բաղկանայ և ընտրութիւնը նախագահին կը յանձնուի . արդարև կը հակառակի ընդհանրապէս ուրիշ ազգաց գործադիր պաշտօնէութեան դրութեանցը . բայց այդ անձինք կը մոռնան թէ մեր ազգին վիճակն ալ իր վարչական դրութեանը պէս տարօրինակ է , ուստի առանց մեր ազգին վիճակն իրենց անհարկած ազգերուն վիճակին հետ բարդաւորելու , մեր ազգին վարչական դրութիւնը միայն կը բաղադատեն օտար ազգաց վարչական դրութեանցը հետ և տարօրինակ կը դատեն . կը սխալին ասանք իրենց բարդաւորութեանը մէջ . թէ՛ ո՛ւսկից ծագում առած է մեր ազգին մէջ գործադիր ժողովներու այս դրութիւնը , և թէ ինչ է անոր առաւելութիւնը մեր ազգին նկատմամբ , կուգեմ այդ ալ բացատրել :

Ս . Պատրիարքն արդար կառնու պահ մը , և ժամը 9 ին նորէն Ատեհան բացուելով՝ ՔԷԿԵԱՆ Էֆէնդիին խօսք կը արուի իւր ընդհանաւալ առնաբանութիւնը շարունակելու համար :

ՔԷԿԵԱՆ Թ . ԷՖ . — (Շարունակելով) Կուգեմ այժմ խօսիլ ընտրութեան եղանակին վրայ : — Մեր ազգային վարչական դրութեան մէջ գործադիր պաշտօնէութիւնը երկու ժողովներու յանձնուած է , այն է՝ կրօնական և Քաղաքական , որ ուղղապէս Ազգ . Երեսփոխանութենէն կընտրուին . Պատրիարքն այս ժողովներուն որոշանցը գործադիրն է : այսպէս եղած է զրեթէ 25 տարիներէ ի վեր . այսպէս տրամադրած է նաև Ազգ . Սահմանադրութիւնը : Հայոց Ազգին Վարչական այս դրութիւնը , զոր ոմանք տարօրինակ կը գրտնեն ըսելով թէ՛ . ամեն ազգաց մէջ գործադիր իշխանութիւնն սակաւաթիւ անձերէ կը բաղկանայ և ընտրութիւնը նախագահին կը յանձնուի . արդարև կը հակառակի ընդհանրապէս ուրիշ ազգաց գործադիր պաշտօնէութեան դրութեանցը . բայց այդ անձինք կը մոռնան թէ մեր ազգին վիճակն ալ իր վարչական դրութեանը պէս տարօրինակ է , ուստի առանց մեր ազգին վիճակն իրենց անհարկած ազգերուն վիճակին հետ բարդաւորելու , մեր ազգին վարչական դրութիւնը միայն կը բաղադատեն օտար ազգաց վարչական դրութեանցը հետ և տարօրինակ կը դատեն . կը սխալին ասանք իրենց բարդաւորութեանը մէջ . թէ՛ ո՛ւսկից ծագում առած է մեր ազգին մէջ գործադիր ժողովներու այս դրութիւնը , և թէ ինչ է անոր առաւելութիւնը մեր ազգին նկատմամբ , կուգեմ այդ ալ բացատրել :

Ս . Պատրիարքն արդար կառնու պահ մը , և ժամը 9 ին նորէն Ատեհան բացուելով՝ ՔԷԿԵԱՆ Էֆէնդիին խօսք կը արուի իւր ընդհանաւալ առնաբանութիւնը շարունակելու համար :

ատորհման շարաշար գործածել սկսանք : բունու-
թեան ու անիրաւութեան շարին այն ատորհա-
նի հասցնին : որ այլ ևս անասնելի եղաւ ժո-
ղովրդեան անոնց օանձարձակ , միայնու ու
բունական վարմունքը : և Ազգն զգաց դատն
փորձերով անոնց խնամութիւնը շարժարեւրու
սկսողը : ժամանակն ալ իրեն սգնելով յաջողե-
ցաւ : թէ և ոչ նուազ աշխատութեամբ : երկու
ժողովներու հաստատութիւնը : զոր շնորհեց
Բարեխնամ կոտորութիւնը : այնպէս որ
ստանց այս ժողովներուն հաւանութեան կնի-
քը կրող Պատրիարքական թագրիրներն . Դը-
րան առջև անընդունելի համարուեցան : Ազ-
գին համար իր ներկայ վիճակին մէջ փրկար-
դրութիւն մ'էր այս որ հաստատուեցաւ :

Այսու ամենայնիւ Պատրիարքները միւտ
լսեցան խոյս տալ այս ժողովներուն հսկողու-
թեան , օգուտ քաղելով ի . Դրան առջև ի-
րենց վայելած առանձնաշնորհութեան և դէպ
յայն հին միահեծան դրութիւն ձգտիլ ուզե-
ցին , կուզեն ու պիտի ուզեն , և ամենքն ա,
յանուն շահու ժողովրդեան , յանուն օգտի
Ազգին : Սակայն մենք պէտք չէ որ անձի վրայ
վստահինք , սլլ սկզբունքի :

Գործադիր ժողովներու դրութեան ծա-
գուտը ցոյցնելու կարծեմ բաւական եղաւ ը-
սածս . առաւելութիւնն ալ ըսեմ :

Ինչպէս ըսի , ժամանակաւ Պատրիարքներն
էին միայն ի . Դրան առջև զազգը ներկայա-
ցնողը . վերջի առեկներս Պատրիարքն ու Ազ-
գային վարչութեան կրօն . և Քաղ . ժողովները
եղան միանգամայն : Իսկ Ազգ . երեսփոխանու-
թիւնը ի . Դրան առջև , հարկադրեալ եմ ը-
սելու , դեռ շատ պարագաներու մէջ աւելի
անուանական է քան իրական . իրաց այս վի-
ճակին մէջ Պատրիարքին ու Ազգ . վարչու-
թեան կրկին ժողովոց մէջ +նրէ : մը խիստ
անհրաժեշտ է . և ահա այս քոնթրօլն է որ
հաստատուած է կրօն . ու Քաղ . ժողովոց ուղ-
ղապէս ընդհ . ժողովոց կողմանէ ընտրուելով-
նին : Ինչ արժէք կունենայ այս ժողովոց գո-
յութիւնը՝ երբ անոնց ընտրութիւնը Պատրի-
արքին թողուի . Պատրիարքն իրեն ձայնակից ,
իրեն արձագանք եղող մարդիկ կը փնտրուէ ան-
շուշտ ժողովական ընտրելու , և այս զարմանք
չէ . Ինչ քոնթրօլ կրնայ սպասուիլ այսպիս
ընտրուած ժողովներէն . իրաւ է թէ վաւերա-
ցումն ընդհ . ժողովներն է , բայց կարելի է չը
վաւերացնել կամ բեկանել Պատրիարքին ներ-

կայացուցած ընտրութիւնը . այսպիսի պարու-
զայ մը եթէ տեղի խն ունենայ , Պատրիար-
քին վրայ անգտատահութիւն կ'ենթադրէ :

Այս քոնթրօլը , որ կրկին ապահովութիւն
կուտայ մեզ գործադիր պաշտօնէութեան ազ-
գային գործերն Ազգին բաղձանացը համաձայն
կատարելուն , կ'ոչնչանայ մէկ խօսքով ընտրու-
թիւնը : Պատրիարքին թողուելով , և այնուհե-
ան դիւրին կրնայ գործադիր պաշտօնէութեան
Ազգին կամեցն անհամաձայն ընթացքի մը մէջ
ընթանալու : Այսպիսի պարագայի մը մէջ ծա-
նըր կըլլայ ընդհ . ժողովոց վիճակը . և ազգա-
յին յեղափոխութիւնը կրնայ դարման ընել ,
բայց յեղափոխութիւնը միշտ իր վնասներն ու-
նի . մենք պէտք է որ իրերն այսպիսի դիւրեթի
մը մէջ պահենք՝ որ յեղափոխութեան հարկ
չը մնայ . այս ալ ուրիշ կերպով չը կրն որ ըլլալ
բայց եթէ քոնթրօլը գործադիր պաշտօնէու-
թեան նոյն իսկ իր մէջը հաստատուելով , ինչ-
պէս լաւ հեռատեսութեամբ հաստատուած են
մեր նախորդները :

Այսչափով կարծեմ բաւական հաստատեցի
թէ Քաղ . ժողովոց ընտրութիւնը Պատրիարքին
յանձնել վնասակար է . հիմա կը փութամ իմ
առաջարկութիւնս ալ ժողովոց ուշադրութեան
յանձնել : Քործով տեսանք թէ Քաղ . ժողովոց
անդամոց թիւը 20 ընելը , նոյնպէս անոնց մէջ
համամասութիւն չըլլալը զէշ հեռանկարն ու-
նեցաւ . ասոր ալ դարման մը ընել հարկ է .
բայց ոչ աւելի վատթար եղանակաւ : Պէտք է
Քաղ . ժողովոց անդամոց թիւը սրահսեցնել , 20
անդամոց տեղ 10 բաւական է , ոմանք 10 քիչ
է ըսին . այդ կարծիքն ունեցողներուն սա կը-
սեմ . թէ՛ թիւը 20 ըլլայ թէ՛ 10 , դարձեալ
քիչ է եթէ հին դրութեամբ վարուին : Նե-
րում կը խնդրեմ նախորդ Քաղ . ժողովոց ան-
դամներէն , որովհետեւ իրենք չեն միայն , այլ
և իրենց նախորդներն ալ դեռ բաւական
փորձառութիւն ունեցած չեն : Քաղ . ժողովը
իրեն չը վերարեբած շատ խնդիրներու միջա-
մէտած է . Սահմանադրութիւնը կըսէ որ Ս .
Պատրիարքն իրեն եկած խնդիրներն ո՛ր ժո-
ղովոցն կամ խորհրդոյն անկ է անոր պէտք է
յանձնէ . բայց ասանկ չէ եղած . ամեն իւրե-
զիր Քաղ . ժողովոցն ներկայացուած է , և շատ
անգամ Տեսուչ խորհուրդներն իրեն չ'դիմած
ատենն ալ՝ ինք միջամտած և ուզած խնդիր-
ներն իւր ատենը բերած է . փորձով տեսած
եմ զայս . եթէ այսպէս չըլլար , Քաղ . ժողովն

այնչափ բազմազարդ չէր ըլլար : Այս սրբա-
պաները միջանկեալ կերպով յիշել պարտաւորե-
ցայ հասկրցնելու համար Փափաղեան էֆէնտիի
և սցրոց , թէ Քաղ . ժողովոց անդամոց թիւը
10 ի իջնելով նուազած չըլլար , եթէ իր գոր-
ծելու եղանակը պիտեսյ և մասնաւոր գործոց
չը միջամտէ : Այս կերպով կ'անհետանայ թը-
ւոյն շատութեան դժուարութիւնը : Գարով ան-
համամասութեան մասին եղած առաջարկութեանց ,
կը սրատախանեմ թէ որչափ ալ խիստ հար-
կաւոր է համաձայնութիւնը Քաղ . ժողովակա-
նաց մէջ , այսու ամենայնիւ համամասութիւն
զոյացնելու համար ինչ միջոց ալ փնտնելը և
դիտանք , անհնար է զայն ի գործ դնել ա-
ռանց ընդհ . ժողովոց իրատեսութիւնը փտան-
գելու : Ընդհ . ժողովն եթէ կուզէ կրնայ այս
համամասութեան կէտը վիճարանութեան դնել
այս մասին դանազան կարծիքներ կան . եթէ
ինձմէ կարծիք սպասուի , ես սա՛ կըսեմ . որ
իմ խիզս հանդարտ է : երբ Քաղ . ժողովոց
թիւը 10 ի իջնելու որոշումն ընդունուի , ընտ-
րութիւնը կրնայ ուղղապէս ընդհ . ժողովոց
կողմէն կատարուիլ , մէկ մէկու հակակիր ան-
ձանց քուէ չը տալու ջանադիր լինելով : Վեր-
ջապէս ամփոփելով իմ առաջարկութիւնս կը
կրկնեմ , որ Քաղ . ժողովը Յ կամ 10 անձերէ
բաղկանայ , ընտրութիւնն ուղղակի ընդհ . ժո-
ղովն կատարուի , և որովհետեւ համաձայնու-
թիւն ալ պէտք է ժողովականաց մէջ , ընդհ .
ժողովը ջանադիր գտնուի որ մէկ մէկու հա-
կակիր անձինք ժողովական չ'ընտրէ :

ԵՆՈՒՍՈՒՆԵՆ Տ . ԷՖ . — Երկու կողմէն
ալ այս խնդրոյն վրայ լաւ փաստարանեցաւ ,
գիտէք թէ չկայ խնդիր մը , կարծիք մը , որ
եթէ սխալ ալ չը լինի , չը կրնայ փաստարան-
ուիլ . մենք մեր անձնական կարծիքները մէջ
կը բերենք գիտնալով որ կարծեաց բաղխումն
լոյս պիտի բղխի ազգային գործերուն առաջ-
նորդելու համար . ուրեմն երբ մենք առանց
կրից և անվրդով խօսիմք ու վիճաբանինք ,
շատ դիւրութեամբ կրնանք պիտար հասկնալ :
Ներեցէք Տեսա՛րք իմ , ըսել , ըստ իս շատ աւե-
լորդ է փաստարանել թէ երբ վարչութեան
անդամք հակակիր անձերէ կ'ընտրուին՝ գործ
մը կարող չեն յառաջ տանիլ . այս կէտը ո՛չ
փաստարանութեան և ո՛չ քուէարկութեան կը
կարօտի . ամենուն գիտցած բանն է որ գոր-
ծադիր իշխանութեան դիտոյն հեռ համաձայն
պէտք են ըլլալ իւր պաշտօնեաները : Ուստի

մէկգի թողով այս կէտը . մենք միայն այն կէ-
տը փնտնենք , որուն վրայ կարծեաց տարբե-
ութիւններ կան . Ընդհ . ժողովը կուտակու-
թիւններ ունի , յայտնի է որ կուտակութիւն-
ներն աղաւ վարչութեանց յարակից շարիքներ
են . առանց կուտակութեան կրտսիսանա-
կան ժողով փնտնելն արևուն մէջ մարդեր փըն-
տուելու կը նմանի . պէտք չէ խորչիլ կուտակ-
ցութիւններէն , միայն հա՛ գարտութեամբ վի-
ճիլ . տեսէ՛ք ինչպէս համակարծիք եղան ա-
նոնք՝ որոնք անցեալ նիստին մէջ անհամաձայն
կարծուած էին : Պէ կեան էֆ . շատ աղիկ բա-
ցաարեց համամասութեան պէտքը և չը կրնալ վ
գտնալ համամասութիւն զոյացնելու եղանակը
Ընդհ . ժողովոյն թողոց : Փափաղեան էֆ .
հմտալից ակնարկութիւններով խօսեցաւ Քաղ .
ժողովոց պաշտօնին վրայ . վերաբնութեան
մէջ խիստ դիւրութեամբ պիտի համաձայնինք
այս մտօնն , և արդէն վերաբնութեան մէջ
եմք . ինչ ճամբաներէ անցնելով ազգը այս վի-
ճակին հասաւ երկու տարիէ ի վեր . նախորդ
Քաղ . ժողովո՛ր որոյ տեսած գործոց վրայ դա-
նազան ակնարկութիւններ կ'ըլլան , այնպիսի
ժամանակի մը մէջ պաշտօնի կոչուած էր , ուր
յայտնի չէր թէ Սահմանադրութիւն կա՞ր թէ
ոչ . ասանկ ժամանակի մը մէջ Ս . Նախադահն ,
որ Սահմանադրութեան ողբոյն հաւատարիմ
մնալու ուխտ ըրած էր , հրաւիրեց Քաղ . ժո-
ղովն իրեն գործակցելու և Քաղ . ժո-
ղովն ինքզինք համարատու ճանչցաւ Ազգ . Ե-
րեսփոխանութեան , յայտարարելով միանգա-
մայն թէ Սահմանադրութեան ողբոյն և օգ-
տաւէտ սկզբանցը պիտի հետեի : Ես կը ձոյ-
նակցիմ Քրիստոսաւոր էֆէնտիի , որ ըսաւ թէ
նախորդ Քաղ . ժողովն առժամանակեայ էր ,
և սա՛ ի մէջ Ազգին և ի . Դրան ընդունուած
մէկ պայմանն էր , որու համեմատ նախորդ
Քաղ . ժողովը մինչև ի վերաբնութիւն պի-
տի շարունակէր իր պաշտօնը , շատ բաներ կա-
յին՝ որոնք չը կրցան տնօրինուիլ , որովհետեւ
առժամանակեայ միջոցի մը մէջ Քաղ . ժողովը
միայն օրական ընթացիկ գործոց հետ կրնար
զբաղիլ : Դժբաղդարար վերաբնութիւնը չը
կրցաւ քիչ ժամանակի մէջ աւարտիլ , հարկ ե-
ղաւ՝ որ Քաղ . ժողովը դադրի իւր պաշտօնէն .
և հրաժարեցաւ քանի որ իւր երկամեայ պաշ-
տօնավարութեան չըջանը լրացած էր , և եթէ
չը հրաժարէր Սահմանադրութեան ողբոյն զէմ
վարուած կ'ըլլար . ուրախ ենք որ ընդհ . ժո-
ղովոց մէջ այս մասին համաձայնութիւն կը տի-

րէ, և նոր ֆաղ. Ժողովոյ ընտրութիւն պիտի լինի: Զը մտնանք որ այս նոր ընտրութիւնը ալ առժամանակեայ է, վասն զի Սահմանադրութիւնը վերաքննութեան մէջ է, քանի որ նոյն իսկ այս Բնդ. Ժողովն որոշած է թէ Սահմանադրութիւնը չը կրնար կէտ առ կէտ դործադրի: Կուգանք այժմ ընտրութեան խնդրոյն, որուն առջև մեծ արգելք մը հանած է Սահմանադրութեան այն յօդուածը՝ որ առկէ առաջ առիթ եղած էր Սահմանադրութեան դադարման: Մենք տեսականը մէկդի ձգելով՝ դործնական եղանակին մէջ նայինք թէ պիտի կրնայ ըլլալ: Ամեն բանի մէջ փորձ մը կայ, և այդ փորձը կը հաստատէ թէ Սահմանադրութեան մէջ մի յօդուածը կէտ առ կէտ դործադրելու ջանալը անտեղի է: քանի որ մեծ առիթներ այդ դործադրական հանգամանքները փոխել կը հարկադրեն, և տարակոյս չկայ որ՝ որ և է ազգ մը չէ կրցած 10 տարուան մէջ կատարեալ Սահմանադրութիւն մը ունենալ: Իրաց այս փնտախին մէջ նկատելով որ Սահմանադրութիւնը վերաքննութեան տակ է, ստորաւոր եմք ընտրել ֆաղ. Ժողով մը՝ որ մինչև վերաքննութեան աւարտումը պաշտօն վարէ, նկատելով որ Բ. Դրան վերաքննիչ յանձնաժողովոյ շինած ծրագիրը Բնդ. Ժողովոյ մէջէն ընտրեալ մասնաժողովոյ մը ձևով քննուած և տեսնուած է արդէն, որ ֆաղ. Ժողովոյ ընտրութեան վերաբերեալ յօդուածը սրբազրեր է, զոնէ այն փորձն ալ տեսանք՝ որ նախորդ ֆաղ. Ժողովը փոքրաթիւ անդամներէ բաղկանալով՝ իր մէջ բնառ անհամաձայնութիւն մը չունեցաւ, կը հետևեցնեմ որ մենք դարձեալ նախորդ ֆաղ. Ժողովոյ նման սակաւաթիւ անդամներէ ժողով մը ընտրելու եմք, որոյ պաշտօնը տեղ մինչև ցաւարտ վերաքննութեան: Իսկ ընտրութեան ձևին դաւով՝ ինչպէս նախքինիաց նիստին մէջ ըսի, ևս բնառ այն կարծեաց համամիտ չեմ որ ֆաղ. Ժողովոյ ընտրութիւնը Ս. Նախագահին յանձնուի, չէ թէ անվտանգութեան համար, որովհետեւ երբ Բնդ. Ժողովը Պատրիարք մ. կ'ընտրէ, ըսել է վտանգութիւն ունի անոր վրայ, և ես կը մերժեմ այն գաղափարը՝ թէ այսօր Պատրիարք մը ունինք վտանգութեան արժանի, և վաղն այնպիսի մէկն կ'ունենանք, որուն վրայ վտանգի չըլլար: Ես վտանգութեան կէտին համար չեմ ըսեր որ Ս. Պատրիարքին չյանձնուի ընտրութիւնը, այլ որովհետև Սահմանադրութեան հիմնական սկզբ-

բուծքին դէմ է, որ կրօն, և ֆաղ. Ժողովոյ ընտրութիւնը Բնդ. Ժողովոյն առած է, լայն կ'ըսէ թէ Բնդ. Ժողովոյ մէջ գաղտնի քուէարկութեամբ կատարուի ընտրութիւնը. ևս զայդ անհնարին կը գտնեմ, որովհետև 70-80 նրեալ-խան քուէ պիտի տան, անկարելի է որ համամիտ անձեր գտնան և բնտրեն, Ուստի լաւ կը գտնեմ այն առաջարկութիւնը, որ կ'ըսէ թէ Բնդ. Ժողովն ընտրէ Ատենապետ մը և անոր յանձնէ իւր ընկերակցաց ընտրելեաց ցանկը պատրաստել և բերել Բնդ. Ժողովոյն, որ անոր վրայ կատարուի քուէարկութիւնը: Նոյնպէս կ'ընդունեմ այն առաջարկութիւնն ալ թէ Բնդ. Ժողովոյ դիւանին յանձնուի, որ ընտրելեաց ցուցակ մը պատրաստէ և Բնդ. Ժողովոյն ներկայացնէ: Ուրեմն կեցրակացնեմ և կատարեմ որ ֆաղ. Ժողովոյ անդամաց թիւը 20 էն 10 ի իջնայ ըստ առաջարկութեան Պէկեան էֆէնտիի: Ի՛հ ընտրութեան համար վերաքննութեան ծրագրին մէջ առաջարկուած եղանակն ալ կրնայ դործադրուի, և այս անգամ փորձով հասկընալ թէ կրնայ ըլլալ, քանի որ փորձը դեռ պիտի կատարելադործէ:

ԱՍՏԵՆԱՊԵՏ Է.Ֆ. — Կը յիշեցնեմ որ Ատենանը գոցելու ժամը մերձեցած է, և տակաւին քանի մը երեսփոխաններ կան՝ որ կուզեն խօսիլ. պէտք է որ Ժողովոյն կամքը հարցնեմ վիճարանութեան շարունակութեանը մասին. եթէ Ժողովը վիճարանութեան շարունակութիւնը որոշէ, այն ատեն հարկ կ'ըլլայ նաև շարունակել յաջորդ նիստին, և թէ այս ր Ատենանը ժամը 10 1/2 ին գոցել:

Քանի մը կողմերէ քուէի ձայներ կը լսուին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. Է.Ֆ. — Օտենն էֆ. իրրև Ատենապետ ըսած է թէ, ատենական ընդհանուր օրէնք է որ վերջին խօսքը ընդդիմադիր կողմին է, Նուսուֆեան էֆէնտիի խօսքէն ետև խնդիրը քուէի դնելը՝ ազդեցութեան տակ քուէի դնել ըսել է. կը բողոքեմ, Ատենապետ էֆ. եթէ առանց ընդդիմադիր կողմին խօսք տալու խնդիրը քուէի դնէք:

Քուէի ձայները նորէն կը կրկնուին. և Ատենապետ էֆ. կը պատրաստուի քուէի դնելու:

Փախաղեան և Խօճատարեան էֆէնտիները միաձայն կը բողոքեն քուէարկութեան դէմ, և խօսք կուզեն:

Քուէի համար անհամբերութեան ցոյցերը

կը նորոգուին, և Ատենապետ էֆէնտին կ'ըստիպուի քուէի դնել նախ թէ վիճարանութեան դադարումը կ'ուզուի թէ շարունակութիւնը:

Ժողովը մեծագոյն մասամբ կ'ընդունի վիճարանութեան շարունակութիւնը:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. Է.Ֆ. — Երեք նիստէ ՚ի վեր է որ ֆաղ. Ժողովոյ ընտրութիւնը կը յուզուի և զայն իրրև Սահմանադրական խնդիր յուզողներն եղան Ազարէկեան Մարկոս և Իֆէկեան էֆէնտիները, որոնք իրր սկզբունք ձևաբ առին ընտրութեան իրաւունքը և ըսին թէ դործադիր իշխանութեան գլխոյն կը պատկանի պաշտօնեայներն ընտրել: Բայց չը նկատեցին թէ գլխոյն իրաւունքը չէ նախագահել օրէնսդրական ժողովին. իսկ եթէ Պատրիարքը նախագահն է, պէտք չէ դործադիր իշխանութեան գլուխ ըլլալ. ասիկա հակասութիւն մ'է, և Ս. Պատրիարքը շատ իրաւամբ ըսաւ անցեալները երեսփոխանական ժողովոյ մէջ Սե. լամիլէի թաղին խնդրոյն առթիւ, թէ ֆաղ. Ժողովը ևս ինքն եմ, եթէ այս խնդիրը քննելու պէտք է որ ևս վար իջնամ ըսաւ աթոռէս: Անոնք որ ֆաղ. Ժողով ըսելով դործադիր պաշտօնէութիւն կը հասկընան, կը սըխալին. ժողով մը դործադիր իշխանութիւն չը կրնար լինիլ. մեր Ազգ. Պատրիարքարանի մէջ դործադիր իշխանութիւն կը կազմեն Ս. Պատրիարքը, Պատր. Փոխանորդը, Բ. Դրան Ազգ. դործակատարը, և ասոնցմէ ՚ի գաւա՞ դատաստանական, տնտեսական և կրթական խորհուրդներու պաշտօնեայները: Իսկ գալով թէ մեր ֆաղ. Ժողովն ի՞նչ է, այս մասին պէտք է որ ուրիշ սահմանադրական ազգաց եղանակին համաձայնութիւնը՝ նորա մասնաժողովներ ունին, ինչպէս է ներքին և արտաքին դործոց մասնաժողովներն, ևն. ուստի մեր ֆաղ. Ժողովն ալ, ինչպէս երբեմն Սէրվիլէն էֆ. ըսաւ, Բնդ. Ժողովոյ մասնաժողովն է և անոր մասնաւորութիւնը: Այս տեսութեամբ ֆաղ. Ժողովը Պատրիարքին քով փոքրիկ երեսփոխանութիւն մը կը ներկայացնէ և ոչ դործադիր պաշտօնէութիւն: Ֆաղ. Ժողովոյ թուոյն գալով ոմանք այսչափ և ոմանք այնչափ պէտք է ըլլայ կրտսն. եթէ ֆաղ. Ժողովը դործադիր պաշտօնէութիւն մ'է: Հինգ պէտք է լինի անոր թիւը, և այս իսկ է բանաւոր թիւն ըստ տեսակի պաշտամանց վարչութեան:

Անոնք որ Սահմանադրութեան հակառակ ֆաղ. Ժողովոյ թիւը 20 էն 10 ի իջեցնել կու-

զեն, եթէ նպատակի մը կամ իրաւունքի մը վրայ հիմնեալ է իրենց փաստը թո՛ղ ցուցնեն, իսկ եթէ իրենց կամքն է որ յառաջ կը բերեն, կը պատասխանեմ որ Սահմանադրութեան կամքն իրենց կամքէն բարձր է: Ֆաղ. Ժողովը կրկին պաշտօն ունի. մի՛ կարծէք թէ ընդհանրական խնդիրներուն ամենն ալ ուղղակի Բնդ. Ժողովոյն պէտք է գան. այնպիսի ընդհանրական խնդիրներ կը պատահին, որ ֆաղ. Ժողովն չանցած Բնդ. Ժողովոյ չեն կրնար ներկայանալ, և որոնց վրայ ֆաղ. Ժողովը մինչև դո՛ւստիակ նիստեր ընել կ'ստիպուի. ասոր համար ֆաղ. Ժողովոյ բազմաթիւ ըլլալուն մէջ օգուտներ կան: Հարկ կը համարեմ օրինակաւ մը բացատրել այս ըսածս, որպէս զի ֆաղ. Ժողովոյ թիւը քիչ ըլլայ ըսողները համոզուին թէ ո՞րչափ հարկաւոր է անոր թուոյն առաւելութիւնը: Ասիէ առաջ Երուսաղէմայ մէջ Լատինական վէճ մը ծագեցաւ. Երուսաղէմայ Պատրիարքը մեր վանքին մէջ Լատինաց պատարագելը արգիլեց. օրագիրը արդէն հրատարակած են այս վէճին պարագաները: Ահաւասիկ ընդհանրական կարևոր խնդիր մը՝ որ ուղղակի Բնդ. Ժողովոյ ատենը չէր կրնար գալ մինչև որ ֆաղ. Ժողովը չը քննէր և չը պարզէր զայն: Եւ ստուգիւ նախորդ ֆաղ. Ժողովն ուղղութեան առած էր այս խնդիրը. այնպէս գիտէինք որ ֆաղ. Ժողովը կը պաշտպանէր այս ազգային դատը. բայց վերջերս խնացանք որ Բ. Դուռը թագրիր գրուեր է թէ Երուսաղէմայ մէջ Ազգային իրաւանց վերաբերեալ առկա կեցած քանի մը խնդիրներն եթէ դործադրուին, Ազգն ալ թոյլտուութիւն կ'ունէ մեր Ս. Յակոբայ վանքին մէջ Լատինաց պատարագելու. այն խնստով նաև Երուսաղէմայ Պատրիարքին հեռագիր քաշուեր է Ս. Պատրիարքի կողմէ, որ թոյլտուութիւն լինի Լատինաց պատարագելու: Այս եղելութիւնն թէ՛ Ազգին և թէ՛ Եկեղեցւոյ իրաւանց դէմ է, և ասոր պատճառն ուրիշ բան չէ, բայց եթէ ֆաղ. Ժողովոյ թուոյն պակաս ըլլալը. եթէ ֆաղ. Ժողովոյ անդամներն 20 ըլլային, լաւ խորհրդածութեան և նկատողութեան պիտի առնուին այս կարևոր խնդիրը:

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. Է.Ֆ. — (Յանուն նախորդ ֆաղ. Ժողովոյ ընդմիջելով). նախորդ ֆաղ. Ժողովն ատանկ թագրիր մը ըրած չէ բնառ. սուտ է նաև բողոքովն սխալ է այդ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. Է.Ֆ. — Ես պաշտօնաւ

կան անձէ մը ընդունած եմ այս տեղեկու-
թիւնը, և այնքան վստահ եմ, որ եթէ յանձ-
նածօրով մը դրուի, կրնամ հաստատել և ս-
պացո ցանել իմ ըսածս :

Աստի դատաւարով խօսքիս կարգին, ունիք
բուն նաև որ Քաղ ժողովոյ Ասեռապետ մը
ընտրուի ընդհ. ժողովն, և նա իր ընկերակ-
ցաց ցանկը բերէ : Այս ալ անտեղի է և իրա-
ւանց կը դաշի : Իրաքանչիւր ժողովոյ իրա-
ւունքն է իւր ասեռապետն ընտրել : Եթէ ա-
տեռապետ մը ընդհ. ժողովն կընտրուի և
իւր սպառնակիցներն ինք կընտրէ, հարկաւ
իւր ընտրածներուն մէջ ինք առաւելութիւն մը
սխալու անկնայ, մինչդեռ հաստատութիւն
սխալ է լինի : Կատարիկն նաև թէ Քաղ-
ժողովն երբ 20 անդամներէ բաղկանայ, օ-
րինատը նիստ կազմելու դժուարութիւն կը
կրէ, և անկարելի կըլլայ դործ տեսնել : Այդ
ըսողները սխալ է նկատեն թէ Մահմանադրու-
թեան 40 րդ յօդուածն այդ դժուարութեան
դէմն առած է, երեք անգամ իրարու վրայ
բացակայ դատուողները հրաժարեալ համարե-
լով : Քաղ ժողովոյ համար այդ յօդուածին
տրամադրութիւնը մինչև հիմա չէ դործադրու-
ած, մինչդեռ ընդհ. ժողովոյ համար չըկար,
դործադրեցինք և անոր յօդուածը փորձով տե-
ւա՞ք այս ընդհ. ժողովոյն վրայ : անչուտ ե-
թէ Քաղ ժողովոյ համար ալ դործադրուի,
մեծագոն մաս գտնելու արդեւրբ բարձուած
կըլլայ : Այս ամեն նկատողութիւնք կը հաստա-
տեն թէ Քաղ ժողովոյ ընտրութեան մասին
Մահմանադրութեան տրամադրութեան չեղե-
լու բնաւ հարկ չըկայ : ուստի կառավարիւմ
որ Մահմանադրութեան տրամադրութեանց
համաձայն ընտրուի Քաղ ժողովը :

ԵՌՄԱՌՖԵԱՆ Տ. ԷՖ. — Օգտնէ Էֆէնտի
խօսքերուն մէջ կէտ մը կար, որ նախորդ
Քաղ ժողովոյն կը պատկանէր : սխալ է ըսե-
լով անցայ այն կէտին վրայէն, և այժմ ուրիշ
խօսք մը չեմ ընել, այլ կը թողում որ ժա-
մանակը դայ նէ տեսնուի այս սխալը : Աստի
կը դատանամ Օգտնէ Էֆէնտի միւս առօրեա-
լեանց : Նախ՝ ըսաւ թէ Մահմանադրութեան
40 րդ յօդուածը դործադրուած է : Քաղ ժո-
ղովոյ համար, մինչդեռ այս ընդհ. ժողովն,
որուն չէր վերաբերեալ յիշեալ յօդուածը, ի-
րեն համար զայն ի գործ դրաւ : Ստաց է
Մահմանադրութեան նոյն յօդուածը միայն
Քաղ ժողովոյ կը պատկանէր : բայց մենք ընդհ.

ժողովոյն ալ յատկացուցինք, եթէ Մահմանադ-
րութեան բառին սխալի հետեւէինք՝ չէինք կըր-
նար ընել զայն : Բայց ընդհ. ժողովն այնպէս
չը կրնայ, տեսաւ որ Մահմանադրութեան
ոգույն հակառակ չէ, տեսաւ որ Մահմանադ-
րութեան մէջ կայ այն սկզբունքը՝ որ Յանգամ
իբարու վրայ բացակայ կըզող ժողովական մը
հրաժարեալ համարուի : ուստի և ընդհ. ժո-
ղովն զինքն իրեն օրէնսդիր նկատելով նոյն բա-
կըզումքն ընդունեց նաև ընդհ. ժողովոյ հա-
մար : Երկրորդ՝ ըսաւ թէ Քաղ ժողովոյ թիւն
ամենուն կամայք համեմատ չը կրնար ըլլալ, և
և թէ ինչու ամայք այս և տես՞ք այն ինչ թի-
ւը կուզեն, և հինգ ըլլալը չեն ուզեր : Լաւ,
այս ալ կարծիք մ'է, և ամեն մարդ ազատ է
իւր կարծիքն ըսել : իմս պահ մը առաջ չը բա-
ցատրեցի : Հիմա հարկը բերաւ որ բացատրեմ
ըստի որ վերաբնութեան ծրարին մէջ առա-
ջարկուած եղանակին համաձայնիք, որովհե-
տե անոր մէջ Քաղ ժողովոյ անդամոց թիւը
12 ի լինած է, և սպառնանքը բաժնուած են
անդամոց մէջ : Օգտնէ Էֆէնտին ինքն ալ ըս-
տարագրած է նոյն ծրարը : մենք թէ և ծը-
րարը մերժեցինք, բայց անոր պարունակու-
թիւնն ալ չը մերժեցինք : դարձեալ Մահմա-
նադրութիւնը վերաբնած ասանկիս անոր մէ-
ջն ալ կրնանք բան առնուլ : դաւանանալ է որ
նոյն խի իրենց ստորագրութեանքն ընդու-
նածնին այժմ կը հերքեն և կը մարտին մեզի
դէմ :

Ս. ՆԱԽԱԳԱՆ. — Այս խնդրոյն վրայ
չեմ ուզեր կարծիք յայտնել, որովհետեւ ինչ
կերպով ալ խօսիմ, կարելի է ամայք դայթակ-
զին կասկածելով թէ Պատրիարքն այնպիսի մար-
դիկ կուզէ ընտրել, որ շարունակի իր իշխանու-
թիւն : Ես հօգուով սրբով մարդարէանամ որ՝
ըստ որում վիճարանութեան շարունակութիւ-
նը քուէի դրեք և ընդունեցիք, այս վիճարա-
նութիւն վերջ չը պիտի ունենայ, և յանչափ
պիտի երկարի, քանի որ երեսփոխանաց մէջ
խօսելու վարձութիւնն ալ շատցաւ : դուք շա-
րունակեցիք վիճարանութիւն, որչափ որ կու-
զէք, թող ամիսներ տեւէ Քաղ ժողովոյ ընտ-
րութիւն. բայց ես ալ բան մը պիտի խնդրեմ,
արտօնութիւն և իրաւունք տուէք ինձ, որ
Պատրիարքարան ներկայացած ամեն խնդիր
ես ինքնին ի գործ դնեմ : օրինակի համար՝
հեռագիր քաշեմ ի Ս. Երուսաղիմ, որ լա-
տինք պատարագ ընեն մեր Ս. Յակովբայ վան-

քին մէջ, նոյնպէս Չարանձախ հեռագրեմ
այս ինչ խնդրոյ համար, և : դուք կարող էք
չաջ ատենարանութիւններ ընել և Մահմանա-
դրութեան օրէնքներ յատաջ բերել : ինձի հա-
մար Մահմանադրութեան օրէնքն և ամեն
բանէ վեր է ժողովական շահ : անոնք ինձ կը
զխեն կողադակեն և գործ կը խնդրեն : Եթէ
չէք տար ինձ այդ գործելու արտօնութիւնը,
ես չեմ կրնար ժողովական պատասխանատու
լինիլ, չեմ կրնար համբերել մինչև ետքը :
այսօրուքն կուզեմ ազատութեամբ գործել :
Եթէ չէք տար այս ազատութիւնը, անկարելի
է ինձ Պատրիարքարանի մէջ մնալ և եկող գա-
ցողներուն խօսք հասկըցնել :

Փ. ՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կը յիշեցնեմ նախ,
որ Ս. Նախագահն ինքն էր որ ասկէց առաջ
ժողովոյ մէկ նիստին մէջ մինչդեռ ժողովը վի-
ճարանութեան դադարում և քուէարկութիւն
ընել կուզէր, առաջարկեց որ վիճարանութիւ-
նը շարունակուի մինչև միւս նիստին : Երկ-
րորդ՝ Ս. Նախագահն ըստ Յրդ յօդուածի Մա-
հմանադրութեան արտօնութիւն ունի ստիպո-
ղական խնդիր մը ստատահած ատեն, ինքնին
սխալ կըզածը անօրինել պատասխանատուու-
թիւնն իւր վրայ առնելով, բայց պարտաւոր-
եալ է եղևութիւնն արձանագրել տալ և գա-
լիք Քաղ ժողովոյն հաշտուել : Բ. էլ է որ Ս.
Պատրիարքին խնդրած արտօնութիւնն արդէն
Մահմանադրութիւնը տուած է և կրնայ ի գործ
դնել յիշեալ յօդուածին համեմատ և ոչ անկէ
աւելի : բայց երբ Երուսաղեմաց լատինական
խնդրոյն սխալ խնդիր մը կայ, Ս. Նախագա-
հը կարող էր՝ քանի որ կրօն. ժողով ալ կայ,
անոր կարծիքն ու որոշումն առնուլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը ընդմիջեմ Ատենա-
բան Էֆ. որովհետեւ բուն խնդրէն կը հեռա-
նաք Ս. Նախագահին հարցմանց պատասխա-
նելով : ժողովն որչա՞ծ է ընտրութեան խնդ-
րոյն վրայ վիճարանութիւնը շարունակել, ուս-
տի սխալ է որ բուն խնդրոյն դառնաք եթէ
խօսք ունիք տակաւին :

Փ. ՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով)
Որովհետեւ Ս. Պատրիարքի չ'պատասխանելի ա-
ռարկէք, կը ընդունիմ և կ'անցնիմ ինչ կէտն
Էֆ. ի ըսել թէ Մահմանադրութեան այն յօդ-
ուածները, որոնց փոփոխութեանը ակնարկու-
թիւններ ըրաւ, ժողովն արդէն ըրած և ըն-
դունած է : բայց Քաղ ժողովոյ յօդուածոց
համար այդպիսի փոփոխութիւն մ'ըրած չէ :

և եթէ ժողով ուզէ, կրնայ այսօր ալ վազն
ալ նոյն յօդուածները քննութեան առնուլ, և
փոփոխել : բայց այս փոփոխութեամբ մնաց-
եալ ամեն յօդուածներն ալ ոչ փոփոխեալ կը
համարուին և ոչ անդործադրելի : վասն զի ժո-
ղովն երբ անդործադրելի յօդուած մը նկատէ
Մահմանադրութեան մէջ, կրնայ դանի վերա-
քննել, առանց սղասելու ընդհանուր վերա-
քննութեան :

Երուսաղեման Էֆ. Մահմանադրութեան
մէջ Քաղ ժողովոյ համար Յանգամ յաճոր-
դարօր բացակայ կըզող անդամոց հրաժարեալ
նի սկզբունքը տեսնելով, նոյնը ընդհ. ժողովոյ
համար ալ ընդունած և դործադրած ըլլալինս
այժմ արդարացուց. Յանգամի բացակայու-
թիւնը ինքնին հրաժարեալ համարելու տա-
ջարկութիւնը ներկայացնողներն ի հարկէ այդ
յօդուածին ուժովն ըրին, և ժողովն ալ ըստ
այնմ ընդունեց : Այսպէս կըզած է 71 թուով
ատեան բանալու վերաբերեալ յօդուածին չա-
փաւորութիւնն ալ : վասն զի 82 յօդուածը
յայտնի կ'ըսէ թէ Կ. Պօլսոյ երեսփոխանաց մե-
ծագոյն մասը կողմուելին ետքը Երեւաթ ժողովն
կրնայ նիստ ընել : ասոր հետեւութեամբ ժո-
ղովն ալ որչեց ընտրեալ երեսփոխանաց մե-
ծագոյն մասովը օրինաւոր ատեան բանալ, հե-
տեարտը ուզած ատեննին, Մահմանադրու-
թեան օգին, և ուզած ատեննին ալ անոր տա-
ռը մեր առջև քող ալեն երեսփոխանաց կը
պատասխանեմք թէ : մինչև ցարք Մահմանադ-
րութեան քանի մը յօդուածները ժողովս չա-
փաւորած կամ փոփոխած է : բայց ոչ թէ
Մահմանադրութեան օգույն և սկզբանց դէմ
մեղանչելով : նոյնպէս կրնայ ուրիշ յօդուած
մ'ալ չափաւորել կամ փոփոխել, միայն թէ
սխալը զգալի ըլլալու է ժողովոյն : և ժողովն
ալ Մահմանադրութեան հիմնական սկզբանց
դէմ չի մեղանչելով, կրնայ ընել այդ փոփո-
խութիւնը՝ ինչպէս է այժմեան յուզեալ խնդի-
րը : ընտրական իրաւունքը Ս. Պատրիարքին
յանձնելը Մահմանադրութեան օգույն և ըս-
կըզրանց դէմ է : բայց 20 թիւը 10 ի լինեցը-
նելը չէ : միայն թէ որովհետեւ Երուսաղեման
Էֆ. այժմ այդ թիւը 12 ի հանեց, կը փութամ
ըսել թէ, հրաժարեալ Քաղ ժողովը 6 անդա-
մէ կը բաղկանար նախ, յետոյ 9 ի հանեցին,
այժմ ալ 12 ի առաջարկութիւն կընեն : այս-
պէս շատցնելու ինչ պատճառներ ունեցան. ե-
թէ աշխատութեան բաժանման սկզբունքով

չորս երեքական անձերէ բաղկացեալ մասնաժողովներ ունենալու համար կ'ընեն, փոխանակ երեք անձէ ունենալու՝ թող Յ ական անձերէ ունենանք, և Սահմանադրութեան 20 թիւը պահպանենք:


ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Դեռ հինգ ատենարանը կան որ խօսք ուզած են, բայց ատենանք գոչելու ժամն արդէն հասած է. ուստի խօսքին շարունակութիւնը յաջորդ նիստին կը մնայ

և խօսից կարգին առաջնութիւնը յիշեալ հինգ ատենարանից վերասպահեալ է:

Արտուեցաւ որ յաջորդ նիստը յառաջիկայ ուրբաթ օր գումարուի, և Ատենանք գոչուեցաւ ժամ 10 1/2 ին:


ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՅ
ԱՏԵՆԱԳՊԻՐ
Յ. ԿՐՃԻԿԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ
Ս. ԱՂԱԲԷԿԵԱՆ




[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]


[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]



ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ



ՄԵՓԵՎԵՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՔԻՎԻՆ



Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և կը դանուի
Եկեղեցեաց բանկալները :